ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բաբաջանյան,

Ի պատասխան Ձեր 01.12.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ Ա.Խաչատրյան - Վաղարշյան փողոցների խաչմերուկում՝ Ա.Խաչատրյան փողոցով դեպի Գյուլբենկյան փողոց ձախ եզրային երթևեկելի գոտիով երթևեկող տրանսպորտային միջոցների համար, գործող երթևեկության կազմակերպման սխեմայի համաձայն, միայն ձախ թույլատրվող շրջադարձի հետ մեկտեղ, նաև ուղիղ երթևեկել թույլատրելու մասին առաջարկը երթևեկության անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով համարվում է ոչ նպատակահարմար, քանի որ Ա.Խաչատրյան փողոցում՝ վերը նշված ուղղությամբ մեքենաների հոսքով պայմանավորված, խաչմերուկից հետո տվյալ ուղղությամբ նախատեսված է մեկ երթևեկելի գոտի և այն առաջին գոտու ուղղությամբ է:

Նշված խաչմերուկում, Վարղարշյան փողոցը հատող հետիոտների համար, լուսացույցի կանաչ լույսի ազդանշանի ժամանակահատվածը (16 վրկ) նվազեցնելու մասին առաջարկը համարվում է ոչ նպատակահարմար (Վաղարշյան փողոցի լայնությունը մոտ 22 մետր է): Տեղեկացվում է նաև, որ Ա.Խաչատրյան փողոցով դեպի Գյուլբենկյան փողոց առաջին երթևեկելի գոտիով (ուղիղ և աջ) երթևեկող տրանսպորտային միջոցների երթևեկը թույլատրող կանաչ լույսի ազդանշանի ժամանակահատվածն արդեն իսկ 20 վրկ է:

Խաչմերուկներում երթևեկության ուղղությունները ցույց տվող ճանապարհային նշանները նաև կանգ գծի կամ լուսացույցի մոտ տեղակայելու առաջարկի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ դրա իրագործման համար անհրաժեշտ է իրականացնել իրավական նորմի փոփոխություն, քանի որ ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատված է ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 28-ի հ.1699 որոշմամբ, մասնավորապես նույն որոշման հավելված 3-ի 52.15 կետի համաձայն.

5.15.1 «Երթևեկության ուղղությունները գոտիներով» և **5.15.2 «Երթևեկության ուղղությունները գոտիով»** նշանները կիրառվում են խաչմերուկում յուրաքանչյուր գոտիով երթևեկության թույլատրելի ուղղությունները նշելու համար, որտեղ պահանջվում է գոտիների օգտագործումն ապահովել տարբեր ուղղություններով՝ տրանսպորտային միջոցների երթևեկության ինտենսիվությանը համապատասխան: 5.15.2 նշանի կիրառումը նախընտրելի է:

Ձախ եզրային գոտուց դեպի ձախ շրջադարձ թույլատրող 5.15.1 և 5.15.2 նշաններն այդ գոտուց թույլատրում են նաև հետադարձը:

Խաչմերուկից առաջ տեղակայված 5.15.1 և 5.15.2 նշանների ազդեցությունը տարածվում է խաչմերուկի վրա, եթե խաչմերուկում տեղակայված 5.15.1 կամ 5.15.2 նշաններն այլ ցուցումներ չեն տալիս:

Նշանների ազդեցությունը չի տարածվում սահմանված երթուղով երթևեկող տրանսպորտային միջոցների վրա:

Նշանները երթևեկելի մասի վրա տեղակայվում են խաչմերուկից այնպիսի հեռավորության վրա, որպեսզի վարորդները հնարավորություն ունենան ժամանակին վերադասավորվելու: Նշանները տեղակայվում են 1.1 գծանշումով երթևեկության գոտիների բաժանման սկզբում:

Ռուբինյանց փողոցում՝ «Երևան սիթի» առևտրի կենտրոնի և հասարակական տրանսպորտի կանգառի միջև ընկած ճանապարհահատվածում մեքենաների կայանումն արգելելու մասին առաջարկը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ լրացուցիչ ուսումնասիրման անհրաժեշտություն ունի, որի արդյունքներով կորոշվի համապատասխան ընթացքը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ տրվել է համապատասխան հանձնարարական նշանները սպասարկող կազմակերպությանը Իսակովի պողոտայում «Զվարթնոց» օդանավակայանից դեպի Սեբաստիա փողոց ուղղությամբ՝ «Նյու Ջերսի» արգելապատի սկզբնամասում «Խոչընդոտի շրջանցում» բացակայող ճանապարհային նշան(ներ)ը հնարավոր սեղմ ժամկետում (3 օր) վերականգնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ